

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՂԱԶԱՆՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋև ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, ձգտելով ամրապնդել Կողմերի պետությունների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները, առաջնորդվելով կրթության և գիտության բնագավառում հավասարության և փոխշահավետության սկզբունքներով համագործակցություն հաստատելու և զարգացնելու ցանկությամբ, ելնելով Կողմերի պետությունների ազգային օրենսդրությունների նորմերից, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերն իրավահավասարության և փոխշահավետության հիման վրա երկու պետությունների միջև զարգացնում և ամրապնդում են համագործակցությունը կրթության և գիտության բնագավառում՝ Կողմերի ազգային օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 2

Կողմերն աջակցում են. գիտական և տեխնիկական փաստաթղթերի, կրթության և գիտության համակարգի բարեփոխման փորձի ուսումնասիրման, ինչպես նաև գիտության ոլորտում հետազոտություններին աջակցելու նպատակով փորձագետների, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը վերաբերող տեղեկատվության, կրթության և գիտության համակարգի բարեփոխման փորձի ուսումնասիրման նպատակով փորձագետների, ուսանողների, կրթական ծրագրերի համար հիմք հանդիսացող դասագրքերի, փաստաթղթերի, հետազոտությունների և ուսումնական պլանների նմուշների, կրթական կազմակերպությունների ատեստավորման և/կամ հավատարմագրման ընթացակարգերի և երկու երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտական աստիճանների մասին տեղեկատվության, կրթության և գիտության բնագավառում վերապատրաստման դասընթացների, կոնֆերանսների և սեմինարների անցկացման մասին տեղեկատվության երկկողմ փոխանակումներին:

Հոդված 3

Կողմերը նպաստում են կրթական և գիտական կազմակերպությունների միջև գործընկերային կապերի հաստատմանը՝ իրենց պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 4

Կողմերը հնարավորություն են տալիս Կողմերի պետությունների քաղաքացիներին վճարովի հիմունքով կրթություն ստանալ Կողմերի պետությունների կրթական կազմակերպություններում՝ քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, հովանավորների միջոցների հաշվին՝ Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 5

Սույն Համաձայնագրով նախատեսված դրույթների կատարումը իրականացվում է Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան՝ Կողմերի պետությունների շահագրգիռ կազմակերպությունների միջև պայմանագրերի կնքման հիման վրա, որոնցում պետք է սահմանվեն նրանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից են նրանց պետությունները:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի իրականացման համար Կողմերի լիազորված մարմիններն են. Հայաստանի Հանրապետության կողմից՝ կրթության և գիտության նախարարությունը, Ղազախստանի Հանրապետության կողմից՝ կրթության և գիտության նախարարությունը: Կողմերի լիազորված մարմինների անվանումների կամ գործառնությունների փոփոխման դեպքում վերջիններս

դիվանագիտական ուղիներով անհապաղ տեղեկացնում են միմյանց:

Հոդված 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված բոլոր վեճերը կլուծվեն Կողմերի լիազորված մարմինների միջև՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու հետ կապված համապատասխան ներպետական ընթացակարգերը Կողմերի կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամանակաշրջանների համար, եթե Կողմերից ոչ մեկը ընթացիկ ժամանակաշրջանի ավարտից վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցում չի ուղարկում դրա գործողությունը չերկարաձգելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի տարածվում գործող ծրագրերի և նախագծերի վրա, եթե Կողմերը երկկողմ համաձայնության չեն եկել դրանց դադարեցման մասին:

Կատարված է Աստանա քաղաքում 2010թ. ապրիլի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ ծագելու դեպքում Կողմերը կհիմնվեն ռուսերեն տեքստի վրա:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011 թ. ապրիլի 19-ին